



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ա Կ Ա Ն Կ Ո Ջ Մ Ա Ն Մ Ա Ս Ի Ն



այր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի 1958 թվականի Ը և 1959 թվականի Գ համարներում

ֆենության առնվեց Հայաստանյայց եկեղեցում «մասնավոր և ծայրագույն վարդապետական գավազանի իշխանության տվչության կարգ»-ի հարցը, որը սերտորեն կապված է մեր եկեղեցու հին կարգերի պահպանության, եկեղեցու կենսունակության և բարեգարդության, ինչպես նաև հավատացյալ հայ ժողովրդի կրոնաբարոյական դաստիարակության խնդիրների հետ:

Այժմ, հարցադրման կարգով, սույն խմբագրականի մեջ առաջ է փառվում Հայ եկեղեցու ամրապնդման հետ կապ ունեցող մի այլ կարևոր հարց. դա ամուսնացյալ ֆանաններին վարդապետական աստիճան տալու առաջարկությունն է:

Քանանայության հեղինակության բարձրացման և ուսումնականության հարցը շատ հին է և ունի իր պատմությունը: Ամեն անգամ, հնուց ի վեր, երբ խոսվել է Հայ եկեղեցու բարեկարգության մասին, միշտ արդարացիորեն առաջ է փառվել առաջին հերթին լուսամիտ, հավատավոր, իր կոչման բարձրության վրա գտնվող հոգևորականության՝ եկեղեցու պաշտոնյաների՝ պատրաստությամբ

հարցը: ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՆԷ Է ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏՈՆՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ: Բարեկարգ եկեղեցի նշանակում է հոգևոր դաստիարակությամբ պատրաստված հավատացյալ ժողովուրդ և լուսամիտ, հավատավոր և բարոյական նկարագրով առաքինի հոգևորականություն, որը միայն կարող է եկեղեցին պահել բարեկարգ և բարեգարդ վիճակում:

Այս մասին շատ է խոսվել և գրվել, արվել են բազմաթիվ առաջարկներ: Նույնիսկ լուսանոցի Բարգեն կաթողիկոսը առաջարկում էր, որ «ֆանանայության առջև բաց թողվին եկեղեցվո բարձրագույն աստիճանները» (Սիրն, 1937 թ. հունիս, էջ 178):

Քանանայության հեղինակության բարձրացման և ուսումնականության հարցը միշտ էլ զբաղեցրել է մեր լուսամիտ հայրապետներին և ազգային-եկեղեցական ժողովներին: Այդ մասին են վկայում բազմաթիվ ժողովական-կանոնական որոշումները և հայրապետական կոնդակներն ու «ՅԱՂԱԳՍ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ» գրված նաոները: Ս. Սահակ Պարթև հայրապետն իր ժամանակին, իր ԿԱՆՈՆՆԵՐԻ մեջ հրահանգում էր ֆոնտիկոպոսներին՝ ֆանանա չձեռնադրել «մանա-



ւանդ զուսումնատեացս, զի որ կամակոր յուսմանէ է՝ անկանի ի շարիս»: ԺՅ կանոնում լուսամիտ հայրապետը վշտով է գրում ֆահանգներին ծովուքյան, մանավանդ ուսումնատեցութեան մասին, թե «իւրեքն չեն ուսեալ և ոչ գորդիս իւրեանց ի դպրոց ունին... Ծանեալ զի ՈՐՊԷՍ ԿՈՒՐՈՒԹԻՒՆ ԱԶԱՅ ԱՏԵԼԻ Է ՄԱՐՄԵՆՈՅ, ՆՈՅՆՊԷՍ ԵՍ ԵՍԳԵՆՈՒԹԻՒՆ ՈԳՈՅ ԱՏԵԼԻ Է ԱՍՏՈՒՄՈՅ»:

Ներսէս Շնորհալի հայրապետն իր «Ընդհանրական»-ում հատուկ գլուխ է նվիրել «Առ դասս ֆահանայից...», որ աստիճանաւ երկրորդ է Եպիսկոպոսաց և կարգեալ է ֆահանայական գործառնութեամբ նուիրել զամենայն հոգիս Աստուծոյ: Շնորհալին խրատում է ֆահանգներին՝ «նաւաչել զգործութիւն երկնային գործոյդ՝ յորում հրաւիրեալ կոչեցայք, որ և հրեշտակական գերաշխարհիկ զօրութեանցն է գեր ի վերայ այս աստիճան, որ ֆ աւարատութեամբ և սրբութեամբ պաշտեն զնա»:

Վեն է և սուրբ ֆահանայական պաշտոնը իր հրեշտակաւորն հանգամանքով, որպէս Աստուծո նվիրում և ժողովրդի ծառայութիւն, որպէս կոչում: Վարդան վարդապետը գրում է, որ երկինքը «ի ձայն ֆահանայի» բացվում և փակվում է («Խրատ յաղագս ֆահանայութեան»), իսկ Հովհաննէս Սարկավագ վարդապետը իր «Յաղագս ֆահանայութեան և ֆահանայից» հոյակապ ճառում («Սոփեբր հայկական», Գ, էջ 9—77) գեղեցկորեն խոսում է ֆահանայական կոչման մասին. «ֆահանայութեան գործատրութիւն և պատիւ ոչ այլ ինչ է, ֆան գտնօրէնութիւն հոգւոց առ ի փրկութիւն ունի դիտատրութիւն». ապա նա ֆահանային ներկայացնում է որպէս ժողովրդի «բժիշկ, վարդապետ, հայր, դայեակ, խորհրդատու», որի միջոցով «խորհուրդ աստուածապաշտութեան լնու և Եկեղեցի Քրիստոսի գեղեցկապէս և ֆաջօրէն կարգօք մատակարարի և ամբողջ մնայ»:

Անցյալում ֆահանայի բնութեւնը և պատրաստութեան գործին մտեցել են մեծ պատասխանատւութեամբ: Այս իրողութեան պերճախոս վկաններն են մեր հին վանքերն ու բնակարանները, որտեղ բարձր դիրքերի վրա դրված է եղել ուսուցումը արտաքին գիտությունների և ներքին՝ կրօնական առար-

կաների, և որտեղ միասին պատրաստվել են մեր ամուսնացյալ ու կուսակրոն ֆահանգները՝ ըստ ժամանակի ոգու և կրթական մակարդակի: Բավական է նաև աշխի անցկացնել Ձեռնադրութեան մաշտոցը, համոզվելու համար այն բանում, թե ինչպիսի բարոյական, իմացական, գիտական պահանջներ պետք է լրացվեն ֆահանայութեան թեկնածուների կողմից՝ այդ բարձր և նվիրական կոչման արժանանալու համար, և առաջին հերթին «ուսումն ֆահանայութեան լիովին և զգիտութիւն աստուածային օրինաց զի որ ոչ ունի զգիտութիւն Սուրբ Գրոց, նաև ոչ զօրութիւն Աստուծոյ»:

Հայ հոգևորականութեան մեծ մեծ տոկոս է կազմում այժմ ամուսնացյալ ֆահանայութիւնը: Հոգևոր իշխանութեան տեսակետից ամուսնացյալ և կուսակրոն ֆահանայութիւնը նույն է. մինչ կուսակրոնը ընտրել է իր ազատ կամով վանական սրբալիցայ կյանք, իսկ մյուսը՝ ֆահանգ՝ ամուսնական կյանք՝ նույն պարտականություններով, հոգևոր իմաստով:

Վերջին ժամանակներում, դժբախտաբար, խտութեամբ չի պահպանվել ֆահանայութեան թեկնածուների բնութեւնը հին կարգը և ֆահանայութիւնը դարձել է մի տեսակ «արհեստ» և ոչ ԿՈՉՈՒՄ, և այդ ասպարեզի համար բավական են համարվել «մասնակի պատրաստութիւն և բնական հարմարութիւններ», ինչպիսիք են, օրինակ, «գեղեցիկ ձայն, ներկայանալի արտաքին» և առավելագոյնը՝ ուսուցչական մի ֆանի տարիների փորձ և հմտութիւն: Բնական հարմարութիւնները կարևոր են, բայց ոչ էական: Քահանայի հիմնական պաշտոնն է նաև հոգեվոր հովութիւնը և ուսուցումը: «Քահանայ կրկին պարտուց արժանի եղիցին՝ որ ֆաշատիցն բանի և վարդապետութեամբ»: Քահանայի պարտքն է «հովուել զժողովուրդ և ուսուցանել միշտ զգործս բարիս և տալ զանձն օրինակ բարեաց ամենեցուն, յամենայն ժամ զհոգևոր խրատ, միշտ ուսուցանելով յեկեղեցւոյ, ի հրապարակս և առանձին, զամենայն ոք ըստ իւրաքանչիւր հասակի» (Շնորհալի):

Անցյալում հայ ժողովրդի կրօնա-բարոյական դաստիարակութեան գործում, վնասական

դեր էր կատարում հայ ֆանաճան, իսկ վերջին ժամանակներս նա դարձել է հանախ միայն պարզ ծիսակատար, հոգևոր պաշտոնյա, իր նվիրական պաշտոնի կատարման մեջ հարմարություններ ներկայացնող մեկը, քեկ չեն էլ պակասել արժանավոր, գիտուն ֆանաճաններ, ինչպիսիք էին սրեկեյանայ ֆանաճաններից Դյուտ ավագ ֆանաճա Աղանյանը, Գրիգոր ավագ ֆանաճա Մանդակունին, էմմանվել ֆանաճա Նազարյանը և ուրիշներ, իսկ արևմտահայ ֆանաճաններից՝ Հովհաննես ավագ ֆանաճա Մկրտչյանը, Թորոս ավագ ֆանաճա Ջուղայեցին, Ներսես ավագ ֆանաճա Թավուզյանը, Գարեգին ավագ ֆանաճա Պողարյանը և ուրիշներ:

Հատկապես Սփյուռում այսօր մեր ազգային-եկեղեցական կյանքի կարիքն ունի դաստիարակ, գիտուն, լուսամիտ ու հավատավոր ֆանաճաններ:

Այս մտածումների լույսի տակ և ֆանաճայության դիրքն ու հեղինակությունը բարձրացնելու ազնիվ մտահոգությամբ, որպես բարոյական ֆաջալերություն և խթան, հնարավոր չէ՝ արդյո՞ք ֆանաճաններին ևս տալ վարդապետական աստիճան: Ինչպես հայտնի է՝ վարդապետական աստիճանը մեր եկեղեցում «ուսումնական աստիճան է և ոչ եկեղեցական ձեռնադրություն» և տրվում էր «ուսման ընթացքի լրացնողներուն» (Օրմանյան): Ուսումնական այդ աստիճանը ունեցող հոգևորականը՝ վարդապետը՝ իրավունք էր ստանում ուսուցանելու, ֆարգելու ժողովրդին և որպես նշան այդ ուսումնականության, կարող էր ձեռնում հովվական գավազան բռնել: Ինչպես նշվեց, տարբերություն չկա ամուսնացյալ և կուսակրոն ֆանաճայության միջև, որով վարդապետական աստիճանի ավշությունը էապես կրոնական եկարագիր չունի:

Ինչպես Հայ եկեղեցում, այնպես էլ Քրիստոնեական Ընդհանուր եկեղեցում «վարդապետական սիստեմը» հաստատվել է «ապահովելու համար եկեղեցիի մեջ ֆրիստոնեական ուսուցման բարձր մակարդակը և ֆարգչի բեմական ձեռնհասությունը»: Որով թե՛ պատմականորեն և թե՛ կանոնական տեսակետից, «վարդապետական աստիճանը

ինքնին կապ չունի ստացողի ամուսնական վիճակի հետ»:

Հայ եկեղեցու կազմակերպման, զորացման և կենսունակության և հավատացյալ ժողովրդի հոգևոր-բարոյական դաստիարակության տեսանկյունից դիտված, ԱՆԽԱՅ ՊԱՀԵՆՈՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵՋ ՀԱՍՏԱՏՎԱՆ ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ, կարելի է վարդապետական աստիճան տալ ամուսնացյալ այն ֆանաճաններին, որոնք լրացնում են այդ աստիճանի համապատասխան հոգևոր, մտավոր և բարոյական պայմանները:

Այսօր, ինչպես անցյալում, ունենք Ս. Էջմիածնի ձեռնարանից, Արմաշի դպրեվանդից, Նրուսադեմի ժառանգավորաց վարժարանից, Անթիլիասի դպրեվանդից շրջանավարտ հմուտ, զարգացած, հավատավոր հին և նոր ֆանաճաններ, որոնք իրենց կյանքի փորձառությանը, գիտությանը և ծառայությանը կկարողանան արժանի լինել վարդապետական աստիճանի: Հարցն այն է, որ կարող ֆանաճաններին տրվելիք վարդապետական աստիճանը չդառնա ՍՈՎՈՐԱԿԱՆ ՁԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

Մեր համեստ կարծիքով՝ Մայր Աթոռում մշակված հատուկ մի կանոնադրությամբ պետք է ճշտել այն պայմանները, որոնցով կարելի կլինի վարդապետական աստիճան շնորհել նաև ամուսնացյալ արժանավոր և գիտուն ֆանաճաններին:

Այսօր էլ հայ ֆանաճան իր գիտական պատրաստությամբ, հոգևոր-մշակութային զարգացմամբ ունի կատարելիք մեծ դեր և պարտականություն հայ ժողովրդի ծոցում: «Ներկա հոգևորականությունը մի կոչում և մի նպատակ ունի, — գրվել է Հայոց եկեղեցու բարեկարգության մասին Գերագույն Հոգևոր Խորհրդի գեկուցման մեջ, 1937 թվականին, — այն է՝ հանդես գալ իբրև Ավետարանի ֆարգիչ, դաստիարակել հայ ժողովրդին ֆրիստոնեական ոգով և եկեղեցու վերածնության ուղին հարթել: Այս նպատակին ծառայելու համար, նոր հոգևորականությունը զինված պիտի լինի նորագույն գիտությամբ, ունենա փիլիսոփայական և ֆրիստոնեական լայն աշխարհայացք: Նա հիմնականորեն ծանոթ պիտի լինի ներկա բնա-

կան գիտությունների, բանասիրական և սոցիալական գիտությունների եզրակացություններին»:

Ճանապարհ ֆանանայության առաջ...

Քանանան պետք է լինի ԿՈՉՄԱՆ ՄԱՐԴ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՏՆՐ: «Շրթունք ֆանանայի զգուշացին գիտության և օրէնս խնդրեսցին ի բերանոյ նորա, զի հրեշտակ Տեառն ամենակալի է (Մաղաք. - Բ 7):

«Եթե կոչումը առաքելական ոգի կուտա հոգեւորականին և կգտնւանէ զայն արիւ-

թյամբ, եթե նկարագիրը հարատւության շիրտ կգորացնէ հոգեւորականին ներսը, ՈՒՍՈՒՄՆ ալ անառիկ կընէ անոր տրամաբանության ամրոցը, ծանոթություններու և հմտության նոխ մթերով մը դիտելու ու դատելու սուր կարողության մը հմայով» (Բարգեն կաթողիկոս):

Բարեկարգ եկեղեցի՝ հավատավոր, լուսամիտ, կարգապահ և ժողովրդանկէր հոգեւորականությամբ: Ա՛յս պետք է լինի մեր կարգախոսը, ինչպէս կուսակրոն նույնպէս և ամուսնացյալ հոգեւորականների համար:

